



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ**

ք. Երևան

02.10.2019թ.

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-ԼՕ-2019/143**

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ.Անանիկյանի

Պատվիրատու՝ «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ
Մասնակից՝ «Մասիս» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
Մասնակից՝ «Մասիս» ՍՊԸ-ի տնօրեն՝ Ա. Ղազարյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀ ԼՄՎՔ ԳՀ ԱՇՁԲ-19/75» ծածկագրով գնանշման հարցում, Վանաձոր համայնքի
երկրորդական փողոցների հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ
քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների
նախարարության կողմից 02.09.2019թ. թիվ 26/26-1/14632-2019 գրությամբ «Մասիս» ՍՊԸ-
ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող

մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ Լոռու մարզի Վանաձորի համայնքապետարանի 27.08.2019թ. թիվ 061/8953 գրության հիման վրա, 02.09.2019թ. «Մասիս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձի 03.09.2019թ.-ի որոշմամբ գործը ընդունվել է վարույթ և 11.09.2019թ.-ին և 19.09.2019թ.-ին նշանակվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 19.09.2019թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 02.10.2019թ.-ին:

2. ՀՀ Լոռու մարզի Վանաձորի համայնքապետարանի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

ՀՀ Լոռու մարզի Վանաձորի համայնքապետարանի 27.08.2019թ. թիվ 061/8953 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«ՀՀ Լոռու մարզի Վանաձորի համայնքապետարանի կարիքների համար ՀՀ ԼՄՎՔ ԳՀ ԱՇՁԲ-19/75 ծածկագրով Վանաձոր համայնքի երկրորդական փողոցների հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված գնանշման հարցման ձևով ընթացակարգի 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչված «Մասիս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հրավերով և հայտով սահմանված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝ «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշում և «Տեխնիկական միջոցներ» որակավորման չափանիշում:

«Տեխնիկական միջոցներ» որակավորման չափանիշում ներկայացված են տեխնիկական միջոցներ ընդհանուր բոլոր չափաբաժինների համար, այնինչ պետք է ներկայացվեին յուրաքանչյուր չափաբաժնի մասով առանձին:

«Մասիս» ՍՊԸ-ն ներկայացրել է հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում իրականացված համանման (նմանատիպ) պայմանագրեր: Սակայն մասնակցի կողմից ներկայացրած պայմանագրերից որևէ մեկը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝ մասնակիցը ներկայացրել է պայմանագրեր, որոնք իրականացվել են քաղաքաշինության բնագավառի շինարարական լիցենզիայի շրջանակներում, այլ ոչ թե տրանսպորտային լիցենզիայի շրջանակներում:

Միաժամանակ հաշվի առնելով, որ մասնակցին մեկ անգամ տրվել է անհամապատասխանությունները շտկելու ժամկետ, որի արդյունքում նա չի շտկել նմանատիպ պայմանագրերում առկա անհամապատասխանությունները մասնակցի հայտը մերժվել է գնահատող հանձնաժողովի որոշմամբ:

Ելնելով վերոգրյալից «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ կետի ա/ ենթակետի պահանջներին համաձայն, դիմում ենք Ձեզ, «Մասիս» ՍՊԸ-ի տվյալները գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով:»:

Միևնույն ժամանակ, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետը, ներկայացրել են թիվ «ՀՀ ԼՄՎՔ ԳՀ ԱՇՁԲ-19/75» ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից «Մասիս» ՍՊԸ-ի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը, որոնք կցվել են ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված գրությանը:

3. «Մասիս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստաթղթերը և դիրքորոշումը.

Բողոքներ քննող անձը 11.09.2019թ. գրությամբ դիմել է «Մասիս» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 02.09.2019թ. թիվ 26/26-1/14632-2019 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայանում է նիստին և ներկայացնելով գրավոր դիրքորոշում, հայտնել է հետևյալը.

«www.gnumner.am կայքում հրապարակվել է հայտարարություն «Մասիս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով, որը ուղարկվել է Վանաձորի համայնքապետարանի կողմից ՀՀ ֆինանսների նախարարությանը:

Ինչպես նաև ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից ստացվել է ծանուցում նիստի ժամանակացույցի մասին:

Ցանկանում ենք Ձեզ պեղեկացնել, որ ՀՀ Լոռու մարզի Վանաձորի համայնքապետարանի կարիքների համար ՀՀ ԼՄՎՔ ԳՀ ԱՇՁԲ-19/75 ծածկագրով Վանաձոր համայնքի երկրորդական փողոցների հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված գնանշման հարցման ձևով ընթացակարգի հրավերով պահանջվել է հետևյալ լիցենզիան.

Սույն հրավերով նախատեսված աշխատանքների կատարման համար պահանջվում են հետևյալ լիցենզիաները.

Քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացում (բացառությամբ շինարարության թույլտվություն չպահանջվող աշխատանքների) ըստ հետևյալ ոլորտի՝

Չափաբաժինների համարները	Պահանջվող լիցենզիայի(ների) տեսակը(ները).
1	2
1	տրանսպորտային

Հրավերով նաև պահանջվել է որպես նախկինում կատարված նմանատիպ պայմանագրերի հետևյալ պահանջներ. Մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը) գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի

ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ փվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից: Նմանատիպ են համարվում փողոցների ընթացիկ նորոգման աշխատանքների կատարումը:

Այսինքն Հրավերով չի պահանջվել, որ նախկինում կատարված պայմանագրերը պետք է իրականացված լինեին լիցենզիա շրջանակներում միայն, այլապես կարծում եմ այն կսահմանվեր հրավերով:

Հրավերով սահմանվել է նաև, որ «Տեխնիկական միջոցներ» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

ա. կնքվելիք պայմանագրի կատարման համար պահանջվում են հետևյալ տեխնիկական միջոցները

Տեխնիկական միջոցի անվանումը	Տիպը	Պահանջվող քանակը
Ինքնաթափ	բեռնափարողությունը առնվազն 5 տոննա	4 հատ
Օդամղիչ/հորատող մուրճ/	օդամղիչի հզորությունը 2,5 մ3 րոպեում կամ ավել	2 հատ
Գլդոն	Քաշը՝ 3-10 տն	2 հատ
Տրակտոր-բուլդոզեր	Քաշը՝ 6-8 տն	1 հատ
Ասֆալտ քերիչ/ֆրեզ/ տրակտոր	40, 60 և 80 սմ լայնությամբ	1 հատ

բ. մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն կնքվելիք պայմանագրի կատարման համար անհրաժեշտ տեխնիկական միջոցների առկայության մասին.

գ. եթե մասնակիցը ճանաչվում է առաջին տեղը զբաղեցրած մասնակից, ապա վերջինս սույն հրավերով սահմանված կարգով և ժամկետներում հանձնաժողովին է ներկայացնում կնքվելիք պայմանագրի կատարման ընթացքում օգտագործման ենթակա տեխնիկական միջոցների փվյալները, դրանց տեխնիկական անձնագրերի և այդ միջոցների նկարմամբ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի սեփականության կամ ժամանակավոր օգտագործման իրավունքը հաստատող փաստաթղթերի պատճենները:

Սակայն պարվիրատուն արձանագրել է, որ Մրցույթի 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչված «Մասիս» ՍՊԸ-ի կողմից

ներկայացված հրավերով և հայտով սահմանված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝ «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշում և «Տեխնիկական միջոցներ» որակավորման չափանիշում:

«Տեխնիկական միջոցներ» որակավորման չափանիշում ներկայացված են տեխնիկական միջոցներ ընդհանուր բոլոր չափաբաժինների համար, այնինչ պետք է ներկայացվեին յուրաքանչյուր չափաբաժնի մասով առանձին:

«Մասիս» ՍՊԸ ն ներկայացրել է հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում իրականացված համանման (նմանատիպ) պայմանագրեր: Սակայն մասնակցի կողմից ներկայացրած պայմանագրերից որևէ մեկը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝ մասնակիցը ներկայացրել է պայմանագրեր, որոնք իրականացվել են քաղաքաշինության բնագավառի շինարարական լիցենզիայի շրջանակներում, այլ ոչ թե տրանսպորտային լիցենզիայի շրջանակներում: Միաժամանակ հաշվի առնելով, որ մասնակցին մեկ անգամ տրվել է անհամապատասխանությունները շտկելու ժամկետ, որի արդյունքում նա չի շտկել նմանատիպ պայմանագրերում առկա անհամապատասխանությունները մասնակցի հայտը մերժվել է գնահատող հանձնաժողովի որոշմամբ:

«Մասիս» ՍՊԸ-ն համաձայն չի Գնահատող հանձնաժողովի նշված հիմնավորումների հետ, քանի որ արդեն նշել են, որ հրավերով չի պահանջվել և պարտադիր պայման չի հանդիսացել, որ հենց տրանսպորտային լիցենզիայի շրջանակներում պետք է կատարված լիներ փոսային նորոգման աշխատանքները:

Մեր կազմակերպությունը իրականացրել փոսային նորոգման, ասֆալտապատման աշխատանքներ, սակայն շինարարական լիցենզիայի շրջանակներում, որի մեջ ներառված է եղել նաև ասֆալտապատման աշխատանքները: Ու եթե առանձին վերցնենք ներկայացված պայմանագրերի շրջանակներում հենց ասֆալտապատման գործը, ըստ ծավալների, ապա մասնակիցը լիարժեք ապահովում է գնային առաջարկի 50 և 20 տոկոսների պահանջները: «Մասիս» ՍՊԸ-ն համաձայն չէ նաև մյուս մերժման հիմքի հետ, քանի որ պատվիրատուի կողմից հրապարակված հրավերով չի եղել պահանջ, որ տեխնիկական պետք է ներկայացվի յուրաքանչյուր չափաբաժնի համար առանձին: Եթե լինեք այդպես, ուրեմն 4 չափաբաժնի համար մասնակիցը պետք է ապահովի 16 հատ ինքնաթափ, որը չի բխում գնումների

մասին օրենքի մրակցային ոչ խտրական հիմունքներով արդար մրցույթային պահանջներից»:

Վերոնշյալներով պայմանավորված, Բողոքներ քննող անձին խնդրել են «Մասիս» ՍՊԸ-ին չներառել սև ցուցակում, քանի որ ընկերությունը բավարարել է հրավերով սահմանված բոլոր չափանիշներին չի խախտել որևէ պարտավորություն, որը կարող է ազդել ցուցակում ներառելու համար:

4. ՍՑ-ԼՕ-2019/143 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

ՀՀ Լոռու մարզի Վանաձորի համայնքապետարանի կարիքների համար՝ Վանաձոր համայնքի երկրորդական փողոցների հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ԼՄՎՔ ԳՀ ԱՇՁԲ-19/75» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Մասիս» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետև՝ նաև Հանձնաժողով) 18.07.2019թ. կայացած նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Մասիս» ՍՊԸ-ն ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակից:

Նույն արձանագրությամբ, Հանձնաժողովը որոշել է առաջին տեղ զբաղեցրած մասնակցից պահանջել ներկայացնել հրավերով սահմանված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը, և հիմք ընդունելով «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ մասի դրույթները՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեից կատարել հարցում՝ 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի հարկային պարտավորությունների վերաբերյալ:

Հանձնաժողովի 26.07.2019թ. կայացած նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Մասիս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված որակավորման փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ. մասնավորապես՝

- «Մասիս» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած համանման (նմանատիպ) պայմանագրերը չեն համապատասխանում հրավերի պահանջներին: Նմանատիպ են համարվում

փողոցների ընթացիկ նորոգման աշխատանքների կատարումը, մինչդեռ մասնակիցը ներկայացրել է «Նովարի մանկապարտեզի կառուցման», «Ստեփանավանի համաբուժարանի վերակառուցման» և «Ազատամուտի մանկապարտեզի վերակառուցման» աշխատանքներ: Վերոնշյալ աշխատանքները դուրս են հրավերով պահանջվող լիցենզիայի /տրանսպորտային/ շրջանակից:

- Համաձայն «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 18-րդ մասի գնման ընթացակարգը չափաբաժիններով կազմակերպվելու դեպքում հայտերի գնահատումը և ընտրված մասնակցի որոշումն իրականացվում է ըստ առանձին չափաբաժինների: «Մասիս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տեխնիկական միջոցների և աշխատանքային ռեսուրսների մասով Տեղեկանքում նշված չէ տեղեկատվություն տեխնիկական միջոցների և աշխատանքային ռեսուրսների մասին յուրաքանչյուր չափաբաժնի մասով:

Նույն արձանագրությամբ, Հանձնաժողովը որոշել է Մասնակցին տրամադրել 3 աշխատանքային օր՝ առկա անհամապատասխանությունները շտկելու համար:

Հանձնաժողովի 05.08.2019թ. կայացած նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ «Մասիս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հրավերով և հայտով սահմանված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերում շտկումից հետո ևս առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշում և «Տեխնիկական միջոցներ» որակավորման չափանիշում: Մասնավորապես՝

- «Տեխնիկական միջոցներ» որակավորման չափանիշում ներկայացված են տեխնիկական միջոցներ ընդհանուր բոլոր չափաբաժինների համար, այնինչ պետք է ներկայացվեին յուրաքանչյուր չափաբաժնի մասով առանձին:

- «Մասիս» ՍՊԸ-ն ներկայացրել է հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում իրականացված համանման (նմանատիպ) պայմանագրեր: Սակայն մասնակցի կողմից ներկայացրած պայմանագրերից որևէ մեկը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես մասնակիցը ներկայացրել է պայմանագրեր, որոնք իրականացվել են քաղաքաշինության բնագավառի շինարարական լիցենզիայի շրջանակներում, այլ ոչ թե տրանսպորտային լիցենզիայի շրջանակներում:

Նույն արձանագրությամբ՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 48-րդ կետի 2-րդ մասի դրույթները, որոշել է՝ «Մասիս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժել: «Մասիս» ՍՊԸ-ի տվյալները գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով ուղարկել ՀՀ ֆինանսների նախարարություն: Ընթացակարգը հայտարարել չկայացած՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1 կետի դրույթները:

«ՀՀ ԼՄՎՔ ԳՀ ԱՇՁԲ-19/75» ծածկագրով գնանշման հարցման հրավերով (այսուհետ՝ Հրավեր) նախատեսված աշխատանքների կատարման համար պահանջվել են հետևյալ լիցենզիաները.

Քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացում (բացառությամբ շինարարության թույլտվություն չպահանջվող աշխատանքների) ըստ հետևյալ ոլորտի՝

Չափաբաժինների համարները	Պահանջվող լիցենզիայի(ների) տեսակը(ները).
1	2
1	տրանսպորտային

Հրավերով պահանջվել է նախկինում կատարված նմանատիպ պայմանագրերի հետևյալ պահանջներ. Մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը) գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից: Նմանատիպ են համարվում փողոցների ընթացիկ նորոգման աշխատանքների կատարումը:

5. Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 02.09.2019թ. թիվ 26/26-1/14632-2019 գրությամբ «Մասիս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշներին: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝

1) մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը.

2) մասնագիտական փորձառություն.

3) տեխնիկական միջոցներ.

4) ֆինանսական միջոցներ.

5) աշխատանքային ռեսուրսներ:

Օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում՝

1) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները).

2) հանձնաժողովը գնահատում է սույն մասի 1-ին կետի համաձայն ներկայացված փաստաթղթերի (տեղեկությունների) համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին, և հրավերով սահմանված դեպքերում ու կարգով գնահատում է տվյալ մասնակցի գնային և ոչ գնային (տեխնիկական) առաջարկի հիմնավորվածությունը:

Նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ հայտը գնահատվում է բավարար, եթե սույն հոդվածի 5-րդ մասի համաձայն ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները: Նման դեպքում մասնակիցը հայտարարվում է ընտրված:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ (02.05.2019թ.-ի N 516-Ն փոփոխություններով) հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ նաև Կարգ) 43-րդ կետի 3-րդ 4-րդ ենթակետերի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը ...

3) էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը.

4) էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «գ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում տեղեկատվություն չտրամադրվելու դեպքում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող:

Կարգի 46-րդ կետի համաձայն՝ սույն կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված ժամկետի ավարտին հաջորդող աշխատանքային օրը քարտուղարն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և կոմիտեից ստացված տեղեկատվությունը: Հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստը

հրավիրվում է սույն կարգի 32-րդ կետի 22-րդ ենթակետով սահմանված ժամկետներում: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին, իսկ անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթեր չներկայացվելու կամ ամբողջական չներկայացվելու կամ ներկայացված փաստաթղթերում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ, ներառյալ կոմիտեի տրամադրած տեղեկատվության հիման վրա, իսկ ապրանքների գնման դեպքում՝ նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Ընդ որում, եթե անհամապատասխանությունն արձանագրվել է կոմիտեից ստացված տեղեկատվության արդյունքում, ապա սույն կետում նշված ծանուցմանը կցվում է նաև այդ տեղեկատվությունը պարունակող փաստաթղթի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը:

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար, և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից: Եթե կոմիտեից ստացված տեղեկատվության արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ արձանագրված անհամապատասխանությունը վերաբերում է՝

ա. հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցած ժամկետանց հարկային պարտավորություններին, ապա անհամապատասխանությունը համարվում է շտկված, եթե մասնակիցը ներկայացնում է կոմիտեի տրամադրած տեղեկատվության մեջ նշված գումարի վճարումը հիմնավորող փաստաթղթի բնօրինակից արտատպված (սկանավորված) օրինակը,

բ. «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին, ապա արձանագրված անհամապատասխանությունը կարող է շտկվել ինչպես առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացվելու, այնպես էլ՝ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Վերոնշյալ իրավակարգավորումների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն հետևության, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

Հանձնաժողովը գնահատում է սույն մասի 1-ին կետի համաձայն ներկայացված փաստաթղթերի (տեղեկությունների) համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին, և հրավերով սահմանված դեպքերում ու կարգով գնահատում է տվյալ մասնակցի գնային և ոչ գնային (տեխնիկական) առաջարկի հիմնավորվածությունը:

Հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով կոմիտե հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը: Ինչպես նաև էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ Կարգով նախատեսված դեպքերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ:

Քարտուղարն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և կոմիտեից ստացված տեղեկատվությունը: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին:

Ընդ որում, հայտը գնահատվում է բավարար, եթե ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները:

Այն դեպքում, երբ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթեր չներկայացվելու կամ ամբողջական չներկայացվելու կամ ներկայացված փաստաթղթերում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ, ներառյալ կոմիտեի տրամադրած տեղեկատվության հիման վրա, իսկ ապրանքների գնման դեպքում՝ նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Ընդ որում, եթե անհամապատասխանությունն արձանագրվել է կոմիտեից ստացված տեղեկատվության արդյունքում, ապա սույն կետում նշված ծանուցմանը կցվում է նաև այդ տեղեկատվությունը պարունակող փաստաթղթի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը:

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար, և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից: Եթե կոմիտեից ստացված տեղեկատվության արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ արձանագրված անհամապատասխանությունը վերաբերում է՝

ա. հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցած ժամկետանց հարկային պարտավորություններին, ապա անհամապատասխանությունը համարվում է շտկված, եթե մասնակիցը ներկայացնում է կոմիտեի տրամադրած տեղեկատվության մեջ նշված գումարի վճարումը հիմնավորող փաստաթղթի բնօրինակից արտատպված (սկանավորված) օրինակը,

բ. «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին, ապա արձանագրված անհամապատասխանությունը կարող է շտկվել ինչպես առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացվելու, այնպես էլ՝ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 61-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնի հայտարարություն այն մասին, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր, պայմանով, որ գնահատող հանձնաժողովը կարող է սույն կետի 2-րդ ենթակետի հիման վրա ներկայացված պայմանագրի (համաձայնագրերի, պայմանագրերի) կատարված լինելու իսկությունը ստուգել կոմիտեի միջոցով: Նախկինում կատարված պայմանագիրը (պայմանագրերը) գնահատվում է (գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը (հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն, իսկ ճանապարհաշինարարական աշխատանքների դեպքում՝ յոթանասուն տոկոսից: Ընդ որում, առնվազն մեկ պայմանագրի շրջանակում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ չպետք է պակաս լինի տվյալ գնման ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան, իսկ ճանապարհաշինարարական աշխատանքների դեպքում՝ երեսունհինգ տոկոսից:

Հրավերի 2.5 կետի 1-ին ենթակետի համաձայն՝ «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

ա. Մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից: Նմանատիպ են համարվում փողոցների ընթացիկ նորոգման աշխատանքների կատարումը:

բ. Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որպես սույն պարբերության 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշի հիմնավորող փաստաթուղթ ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի պատճենը, իսկ դրա պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

Մասնակցի որոկավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն պարբերությամբ նախատեսված պահանջները:

գ. մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն ենթակետով նախատեսված պայմաններն ու պահանջները:

Վերոնշյալ նորմերի համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ մասնակիցների «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատելու համար մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր:

Ընդ որում նախկինում կատարված պայմանագիրը գնահատվում է նմանատիպ, եթե դրա շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ

գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ Կարգի 61-րդ կետի դիսպոզիցիայից (բովանդակությունից) ուղղակի հետևում է, որ «նմանատիպ պայմանագիր» եզրույթն իրենից ներկայացնում է երեք կարևոր միաժամանակյա վավերապայմանների առկայություն, դրանք են՝

1. Պայմանագիրը պետք է կատարված լինի հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում,

2. Պետք է կատարված լինի պատշաճ ձևով,

3. Գումարային արտահայտությամբ, չպետք է պակաս լինի տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից և առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, չպետք է պակաս լինի տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:

Հրավերի 2.5 կետի 1-ին ենթակետի համաձայն՝ «Տեխնիկական միջոցներ» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

ա. կնքվելիք պայմանագրի կատարման համար պահանջվում են հետևյալ տեխնիկական միջոցները

Տեխնիկական միջոցի անվանումը	Տիպը	Պահանջվող քանակը
Ինքնաթափ	բեռնատարողությունը առնվազն 5 տոննա	4 հատ
Օդամղիչ/հորատող մուրճ/	օդամղիչի հզորությունը 2,5 մ3 րոպեում կամ ավել	2 հատ
Գլդոն	Քաշը՝ 3-10 տն	2 հատ
Տրակտոր-բուլդոզեր	Քաշը՝ 6-8 տն	1 հատ
Ասֆալտ քերիչ/ֆրեզ/ տրակտոր	40, 60 և 80 սմ լայնությամբ	1 հատ

բ. մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն կնքվելիք պայմանագրի կատարման համար անհրաժեշտ տեխնիկական միջոցների առկայության մասին.

գ. եթե մասնակիցը ճանաչվում է առաջին տեղը զբաղեցրած մասնակից, ապա վերջինս սույն հրավերով սահմանված կարգով և ժամկետներում հանձնաժողովին է ներկայացնում կնքվելիք պայմանագրի կատարման ընթացքում օգտագործման ենթակա տեխնիկական միջոցների տվյալները, դրանց տեխնիկական անձնագրերի և այդ միջոցների նկատմամբ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի սեփականության կամ ժամանակավոր օգտագործման իրավունքը հաստատող փաստաթղթերի պատճենները:

դ. մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն ենթակետով նախատեսված պայմաններն ու պահանջները:

Վերոգրյալ իրավանքների համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել հետևյալը.

ՀՀ Լոռու մարզի Վանաձորի համայնքապետարանի կարիքների համար՝ Վանաձոր համայնքի երկրորդական փողոցների հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ԼՄՎՔ ԳՀ ԱՇՁԲ-19/75» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցության հայտ ներկայացրած «Մասիս» ՍՊԸ-ն Հանձնաժողովի 18.07.2019թ. կայացած նիստի թիվ 2 արձանագրության հիման վրա ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակից:

Նույն արձանագրությամբ, Հանձնաժողովը որոշել է առաջին տեղ զբաղեցրած մասնակցից պահանջել ներկայացնել հրավերով սահմանված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

Հանձնաժողովի 26.07.2019թ. կայացած նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Մասիս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված որակավորման փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ. մասնավորապես՝

- «Մասիս» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած համանման (նմանատիպ) պայմանագրերը չեն համապատասխանում հրավերի պահանջներին: Նմանատիպ են համարվում փողոցների ընթացիկ նորոգման աշխատանքների կատարումը, մինչդեռ մասնակիցը ներկայացրել է «Նովարի մանկապարտեզի կառուցման», «Ստեփանավանի համաբուժարանի վերակառուցման» և «Ազատամուտի մանկապարտեզի վերակառուցման» աշխատանքներ: Վերոնշյալ աշխատանքները դուրս են հրավերով պահանջվող լիցենզիայի /տրանսպորտային/ շրջանակից:

- Համաձայն «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 18-րդ մասի գնման ընթացակարգը չափաբաժիններով կազմակերպվելու դեպքում հայտերի

գնահատումը և ընտրված մասնակցի որոշումն իրականացվում է ըստ առանձին չափաբաժինների: «Մասիս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տեխնիկական միջոցների և աշխատանքային ռեսուրսների մասով տեղեկանքում նշված չէ տեղեկատվություն տեխնիկական միջոցների և աշխատանքային ռեսուրսների մասին յուրաքանչյուր չափաբաժնի մասով:

Նույն արձանագրությամբ, Հանձնաժողովը որոշել է Մասնակցին տրամադրել 3 աշխատանքային օր՝ առկա անհամապատասխանությունները շտկելու համար:

Հանձնաժողովի 05.08.2019թ. կայացած նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ «Մասիս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հրավերով և հայտով սահմանված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերում շտկումից հետո ևս առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշում և «Տեխնիկական միջոցներ» որակավորման չափանիշում: Մասնավորապես՝

- «Տեխնիկական միջոցներ» որակավորման չափանիշում ներկայացված են տեխնիկական միջոցներ ընդհանուր բոլոր չափաբաժինների համար, այնինչ պետք է ներկայացվեին յուրաքանչյուր չափաբաժնի մասով առանձին:

- «Մասիս» ՍՊԸ-ն ներկայացրել է հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում իրականացված համանման (նմանատիպ) պայմանագրեր: Սակայն մասնակցի կողմից ներկայացրած պայմանագրերից որևէ մեկը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես մասնակիցը ներկայացրել է պայմանագրեր, որոնք իրականացվել են քաղաքաշինության բնագավառի շինարարական լիցենզիայի շրջանակներում, այլ ոչ թե տրանսպորտային լիցենզիայի շրջանակներում:

Նույն արձանագրությամբ՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 48-րդ կետի 2-րդ մասի դրույթները, որոշել է՝ «Մասիս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժել:

«ՀՀ ԼՄՎՔ ԳՀ ԱՇՁԲ-19/75» ծածկագրով գնանշման հարցման հրավերով (այսուհետ՝ Հրավեր) նախատեսված աշխատանքների կատարման համար պահանջվել են քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացման (բացառությամբ շինարարության թույլտվություն չպահանջվող աշխատանքների) տրանսպորտային ոլորտի լիցենզիա:

Հրավերով պահանջվել է նախկինում կատարված նմանատիպ պայմանագրերի հետևյալ պահանջներ. Մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը) գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից: Նմանատիպ են համարվում փողոցների ընթացիկ նորոգման աշխատանքների կատարումը:

Սույն գործի փաստերի հիման վրա, Բողոքներ քննող անձը փաստում է, որ Հրավերով չի պահանջվել և պարտադիր պայման չի հանդիսացել, որ Մասնակցի կողմից որպես նախկինում կատարված նմանատիպ պայմանագիրը հենց տրանսպորտային լիցենզիայի շրջանակներում պետք է կատարված լիներ: Ընկերության կողմից Հանձնաժողովին ներկայացված նմանատիպ պայմանագրերի ուսումնասիրությունից պարզ է, որ վերջինս իրականացրել է փոսային նորորոգման, ասֆալտապատման աշխատանքներ: Ինչ վերաբերում է «Տեխնիկական միջոցներ» որակավորման չափանիշում ներկայացված տեխնիկական միջոցների ընդհանուր բոլոր չափաբաժինների համար ներակայացված լինելուն, այն որ դրանք, ըստ Հանձնաժողովի, պետք է ներկայացվեին յուրաքանչյուր չափաբաժնի մասով առանձին, ապա Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ այդպիսի պայման Հրավերով նույնպես նախատեսված չի եղել, և չէր էլ կարող լինել, քանի որ նման պահանջը ինքնաբերաբար կհակասեր և չէր բխի Օրենքի մրցակցային ոչ խտրական հիմունքներով արդար մրցոյթային պահանջներից:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ ... մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը.

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Մասիս» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին Հանձնաժողովի կողմից 05.08.2019թ.-ի թիվ 4 արձանագրությամբ կայացված որոշումը ոչ իրավաչափ է, չի բխում գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված սկզբունքներից և պահանջներից, հակասում է Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի դրույթներին, համաձայն որոնց՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

- 1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում:
- 2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Տվյալ դեպքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ Մասնակցի կողմից չի խախտվել գնման գործընթացի շրջանակում ստանձնած որևէ պարտավորություն, որն էլ կարող էր հանգեցնել գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը: Ուստի «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 02.09.2019թ. թիվ 26/26-1/14632-2019 գրությամբ «Մասիս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

**ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝**



ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ